

# ԱՐԱԳՐԱԿԱՆ

ՆԱՅԻՄ ԱԼ-ԵԱՖԻ  
(1936-2003)



Արար գրականագետ, գրաքննադատ, բանասէր, ծեռազրագէտ, հասարակական գործիչ եւ համալսարանի դասախոս՝ Դոկտ. Նայիմ Ալ-Եաֆի ծնած է Սուրիոյ Հռոմ քաղաքը 1936ին։ Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, որմէ ետք մեկնած է Դամասկոս, ապա Գահիրէ, ուր աւարտած է տեղայն պետական համալսարանի Արարական Գրականութեան Բաժանմունքը։

Երկար տարիներ դասախոսած է Ալճերիոյ, Սուրիոյ եւ Քուեյրի համալսարաններուն մէջ։ Նախազահած է Սուրիոյ Արար Գրողներու Միութեան Հայէպի մասնաճիւղը եւ մշակութային եռուն գործունեութիւն ծավալած հոն։ Գործակցած է հալեպահայ մշակութային միութիւններու հետ, տալով հայութեան առնչուող մէկէ աւելի դասախոսութիւններ։

Եաֆիի գրական-ուսումնասիրական վաստակին նաև կը կազմեն տարբեր բովանդակութեան 24 հատորներ, ինչպէս նաև գրականագիտական եւ գրաքննադատական բնոյրի քազմաքի ուսումնասիրութիւններ, յօդուածներու ժողովածուներ եւ արար ժամանակակից մարդը յուզող քազմաքի այլ գործեր։

Եաֆի անտարբեր չէ մնացած հայութիւնը յուզող հարցերու նկատմամբ։ Իր կեանքի վերջին տարիներուն ընթերցողի սեղանին դրած է հայագիտական բնոյրի 4 գիրքեր.-

1- (Հայկական կոտորածներն ու արար հանրային կարծիքի դիրքորոշումը անոր հանդէպ), Դամասկոս, 1992, 104 էջ։ Գիրքը կը խօսի Հայկական Ցեղասպանութեան օրերուն արար ժողովուրդի դիրքորոշումին մասին պաշտօնական եւ ժողովրդային մակարդակներով։ Հեղինակը նախ ընթերցողին կը ծանօթացն Հայկական Ցեղասպանութիւնը, անոր դրդապատճառները, հնտեւանքները, օտար երկիրներու դիրքորոշումն ու պատասխանատութիւնը, ապա՝ կ'անցնի հիմնական նիւթին։

Գիրքին վերջին գլուխը կը վերլուծէ արարական արդի գրականութեան երկու մեծ դէմքերուն։ Ապառու Ռահման Մումիֆի եւ Խարակիմ Ալ-Խալիլի վեպերուն Հայկական Ցեղասպանութեան նույրուած հատուածները։

2- جمال باش السفاح - (Մարդասպան նեմալ Փաշա), Դամասկոս, 1993, 175 էջ։ Նեմալ Փաշա արաբներուն ծանօթ է «մարդասպան նեմալ Փաշա» մակդիրով, որովհետեւ ի նր էր որ Ա. Աշխարհամարտի օրերուն 1915-1916ին Դամասկոսի եւ Պէյրութի գլխաւոր հրապարակներուն վրայ կախաղան քարձրացուց 34 արար մտաւորականներ բանաստեղծներ, խմբագիրներ, կրրական, մշակութային եւ կրօնական գործիչներ։

Դոկտ. Եաֆիի այս գիրքը, որ նեմալ Փաշայի մասին գրուած առաջին մենագրութիւնն է արար պատմագրութեան մէջ, պատմական դէպքերու քննարկ-

ման կողքին, կը վերլուծ մեծ մարդասպանին նկարագիրը, անոր ոճրային բնազդն ու կերպարը: Վերջին գլուխը նուիրուած է երկու հայորդիներու կողմէ անոր ահարեկման պատմութեան, ուր հեղինակը կ'անդրադառնայ Հայկական Ֆեղասպանութեան և Շեմալի սպանութեան դրդապատճառներուն:

3- ١٩٢٠-١٨٧٠ - شعر العربي الحديث - شعر المشرق والمهاجر

(Թուրքի կերպարը արարական արդի բանաստեղծութեան մէջ - Արևելքի ու արտասահմանի բանաստեղծութիւնը, 1870-1920), Դամասկոս, 1995, 239 էջ, հեղինակակից՝ Մահմետ Ալ-Մունամմատ: Խիստ հետաքրքրական հատոր մը, որ գրական վերլուծումի կենքարկէ բուրքին կերպարը՝ Ժմ. դարավերջի ու Եղարասկիզի արարական արեւելքի երկիրներուն մէջ ծաղկած բանաստեղծական գործերուն մէջ:

Թուրք ժողովուրդի ծագման ու հնագոյն պատմութեան նուիրուած մուտքեն եսոք, հեղինակները կ'անցնին հիմնական նիւթին՝ զայն բաժնելով գլխաւոր երեք մասերու:

Ա. Թուրքին քաղաքական կերպարը (բռնատէր, աւազակ-քաղանիչ, աղետարեր և վերջապէս՝ ոճրագործ-ցեղասպան):

Բ. Թուրքին ընկերային ու քարոյական կերպարը (ամրարտաւան, դաւադիր, մարդատեաց ոխակալ, դաւաճան, տգէտ ու գիտութեան քշնամի):

Գ. Թուրքին կրօնական կերպարը:

Քննարկուող իրաքանչիր կերպարի հետ մէջրերումներ կատարուած են սունեալ նիւթին հայող բանաստեղծութիւններէն, իսկ հատորի վերջաւորութեան տրուած են նիւթին առնչուող 20 քերքուածներ:

Իր տեսակին մէջ հետաքրքրական ու այժմէական հատոր մը, որ արժէ քարգմանաբար ունենալ հայերէն ու այլ լեզուներով:

4- ضد الاستعمار العثماني / ضد العرب والأرمن ضد الـ (Հայերու եւ արաբներու պայքարը Օսմանեան զաղութատիրութեան դէմ), Դամասկոս, 1995, 102 էջ, հեղինակակից՝ Դոկտ. Խալիլ Մուսա: Գիրքը բաժնուած է վեց գլուխներու առաջինը կը խօսի օսմանցի բուրքերու, արաբներու եւ հայերու մասին, երկրորդը կը քննարկէ 1839-1916՝ արաբներու եւ բուրքերու յարաքերութիւնները, երրորդը նուիրուած է հայ եւ բուրք յարաքերութիւններուն՝ 1860-1923, չորրորդը՝ բուրքերու դէմ հայ եւ արար համատեղ պայքարին, հինգերորդը՝ անոնց քաղաքական պահանջըններուն, իսկ վեցերորդը ու վերջին գլուխը կը խօսի հայ եւ արար ժողովուրդներու յարաքերութեանց ներկայ իրավիճակին ու հեռանկարներուն մասին:

Դոկտ. Ալ-Եաֆի երկար տարիներ ապրած է Սուրիոյ Հայէա քաղաքը եւ մահացած այնտեղ՝ 8 Սեպտեմբեր 2003ին, մօտ տարի մը Աէն Լուի հիւանդանոցի իր անկողինին քամուած մնալ ու անողոր հիւանդութեան դէմ յուսահատ պայքար մղելէ եսոք:

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ  
mihran.min@aya.ye

## ՎԱՌԱՄ (ՎԱՀՐԱՄ) ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ (1928-2008)



Պատմաբան, քարզմանիշ Վաղամ Մարտիրոսեանը ծնուել է 1928-ին, բանուրի ընտանիքում, Թրիլիսի, որ ստացել է սկզբնական կրութիւնը: 1947-1952՝ ուսումը շարունակել է Երևանի Պետական Համալսարանի Միջազգային Ֆարարերութիւնների Ֆակուլտետում: Աշխատանքային գործունեութիւնը Մարտիրոսեանը սկսել է իրեն մանկավարժ՝ 1952-1956՝ Արքիկի շրջանի Հոռոմ գիլի դպրոցում դասաւանդելով պատմութիւն եւ ուսուց լեզու:

Այսուհետեւ, հանգուցեալ պատմաբանի կեանքի գերակշռող մասն անրակտելիօրեն կապուել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիային: 1959-1997 եւ 2004-2008՝ նա աշխատել է Պատմութեան Ինստիտուտում, իսկ 1999-2004՝ Հայոց Ֆելասպանութեան Թանգարան-Ինստիտուտում: Պատմութեան Ինստիտուտի ասպիրանտուրայում ուսումնառութեան տարիներին (1956-1959), Մարտիրոսեանը ծեռնամուխ է եղել Ժ. դարի հայ-վրացական յարաբերութիւնների պատմութեան ուսումնասիրութեանը: 1967ին պաշտպանել է թեկնածուական թեզ, որը յետագայում լոյս է ընծայել իրեն մենագրութիւն՝ Հայ եւ Վրաց ժողովուրդների Համագործակցութիւնը Ազատագրական Պայքարում (XVIII Դարի 20ական թուականներ) (1971) խորագրով: Այս գրքում նա առաջին անգամ օգտագործել է Մոսկովայում գտնուղ Ռուսական Կայսրութեան Արտաքին Գործերի Նախարարութեան արխիվ մեծարանակ անտիպ փաստաբուրեր, ինչը նրան հնարաւորութիւն է ընծեռել ամբողջ խորութեամբ եւ գիտական պատշաճ նակարդակով լուսաբանելու հայ եւ վրաց ժողովուրդների պայքարը պարսիկ կեղերիչների ու բուրք ասպատակիչների դէմ: Նրա հիմնական հետևութիւններն առ այսօր առարկութիւնների տեղիք չեն տալիս: Աւելի յատկանշական են այժմէական է այն, որ Մարտիրոսեանը հաւաստել է Անդրկովկաստմ Ռուսաստանի տիրապետութեան հաստատման առաջադիմական բնոյրը: Հայ-վրաց-ռուսական յարաբերութիւնների պատմութիւնը յետագայում եւս մշտապէս գտնուել է նրա ուշադրութեան կենտրոնում: Այս թեմային նա նուիրել է բազմարի յօդուածներ ու հրապարակուններ, որոնք լոյս են ընծայուել հայրենական տարրեր պարբերականներում եւ գիտական հրատարակութիւններում:

Արխիվային աշխատանքի հանդէպ հակում եւ սէր ունեցող պատմաբանադրիրագետը երկար տարիներ աշխատել է տարրեր ուսուական արխիվներում եւ իր անուրանալի նպաստն է թերել Ժ. դարի հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութեանը նուիրուած փաստաբուրերի ժողովածուների կազման աշխատանքներին, ինչպիսիք են Պատմութեան Ինստիտուտի իրականացրած՝ *Armiano-Russkie Otnoshenia Vo Vtorom Triatsatiletii XVIII Veka, t. III* (Հայ-ռուսական յարաբերութիւնները XVIII դարի երկրորդ երեսնամեակում, Հոր. III) (1978), *Armiano-Russkie Otnoshenia V XVIII Vekе, 1760-1800, t. IV* (Հայ-ռուսական յարաբերութիւնները XVIII դարում, 1760-1800թ., Հոր. IV) (1990) ստուարածաւալ հրատարակութիւնները:

Մարտիրոսեանի գործունեութեան մէջ նշանակալից տեղ է զքաղեցրել նաև բարգմանական աշխատանքը: Վարժ տիրապետելով ոռուերեն և գերմաներեն լեզուներին, նա պարբերաբար հայերեն է բարգմանել և հայ գիտական հանրութեանն ու ընթերցող հասարակութեանը ներկայացրել ոռու յայտնի գործիչների կենսագրականներ՝ Դմիտրի Դոնսկոյ (1985), Պողաչով (1989), և Աւագո-Հոնգարիայի Դմիտրագետների Հայոց Ֆեղասպանութեան Մասին (1915-1918 թթ.) (2004) Հայոց Ֆեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան համար մեծ կարծուրութիւն ներկայացնող փաստաթղթերի ժողովածուն:

Մարտիրոսեան ազնի, բարեացակամ եւ սկզբունքային անձնաւորութիւն էր: Ղարաբաղեան շարժման շրջանին, լինելով խիստ դժգոհ խորհրդային իշխանութիւնների՝ հայ ժողովրդի արդար պահանջի հանդկա ցուցաբերած անբարեացակամ վերաբերմունքից, նա դորս եկաւ Խորհրդային Սիոթեան Կոմունիստական Կուսակցութեան շարքերից, իսկ յետազայում անդամագրուեց ՀՅԴ:

Դառն էր Մարտիրոսեան մարդու ճակատագիրը: Մահից մի քանի տարի առաջ նա կորցրեց կնոջը, այնուհետեւ յիսունը հազիւ բոլորած միակ զաւկին, որի անժամանակ վախճանը շատ ծանր տարատ:

Վառամ Մարտիրոսեանը իր մահկանացուն կնքեց 7 Հոկտեմբեր 2008ին Երեան:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ  
varuzhan\_poghosyan@yahoo.com

## ԷՍՍԱ ԿՈՐԻՆՍԱԶԵԱՆ (1930-2009)

Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Զեռագրերի Ինստիտուտ-Մատենադարանի աւագ գիտաշխատող, արուեստագիտութեան դոկտոր, նկարչութիւն Էնմա Մուշեղի Կորխմազեանը ծնուել է 1930 Սեպտեմբեր 23ին, Մոսկովյան, շինարարի եւ քիմիկոսի ընտանիքում: 1941ին տեղափոխուել է Երեան: 1954ին աւարտել է Գեղարվեստա-քանտերական Ինստիտուտը և աշխատանքի անցնելով Մատենադարանում՝ ընդգրկուել է ուսու արուեստաբան, հայ միջնադարեան արուեստի մասնագետ եւ վերականգնող նկարիչ Լիդիա Դուռնովոյի կազմակերպած արուեստագետների խմբում, որոնք Հայաստանում առաջինն են զքաղուել եկեղեցական որմնանկարների ու ծեռագիր մատեանների մանրանկարչութեան վերականգնումը ու ընդօրինակմամբ: Կորխմազեանն անմիջական մասնակցութիւն է ունեցել Մայր Արոռ Սուրբ Էջմիածնի տաճարի, Տաթեւի վանքի, Լմբատավանքի, Արուճի, Ախրալայի, Ղրիմի Ս. Խաչ եւ մի քանի այլ եկեղեցիների եզակի որմնանկարների փրկութեան գործին:

1960ականներից Կորխմազեանը հիմնականում նուիրուել է հայկական մանրանկարչութեան ուսումնասիրման գործին: Նրա ջանքերն ուղղուել են Ղրիմի հայ միջնադարեան արուեստի ուսումնասիրմանը: 1971ին «Ղրիմի Մանրանկարչական Դպրոց» թեմայով պաշտպանել է աստենախօսութիւն եւ ստացել արուեստաբանութեան թեկնածուի աստիճան: 1976ին հրատարակ-

ուել է նրա Արիմի Հայկական Մանրանկարչութիւնը (XIV-XVII դ.) գիրքը, որի շնորհի լոյս է սփռուել հայ մատենական նկարչութեան մի նոր դպրոցի վրայ։ Գրքում վեր են հանում ու մեկնարանում Արիմում ապրած տաղանդաւոր հայ մանրանկարիչների գործերը, որոնք մինչ այդ ժամօր չեն արտեստասէր հասարակութեանը։

1970-80ականներին Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուերով Կորիսմազեանն ստեղծել է սրբապատկերներ Թորոս Ռուլինի, Սարգիս Պիծակի եւ միջնադարեան այլ վարպետների մանրանկարների հիման վրայ, որոնք գարդարում են հայ եկեղեցիները Հայաստանում եւ Սփիտքում (Երաք, Իրան)։

1977ին Կորիսմազեանն իր գործընկերութուուու Երինա Դրամքեանի հետ ընթերցողների սեղանին է որել Մատենադարանի գեղարտեստական գանձերին նուիրուած ոուսերէն գիրքը, 1987ին՝ հայկական մանրանկարչութեանը նուիրուած ոուսերէն աշխատանքը։ «Մատենադարանի Գանձերը» մատենաշարով տարբեր լեզուներով եւ տարբեր տարիների լոյս են տեսել հայ մանրանկարչութեան վերաբերեալ նրա գիտահանրանատչելի գրքոյկները՝ հայերէն եւ ոուսերէն լեզուներով։ 2006ին Հրավարդ Յակոբեանի, Լիլիթ Զարարեանի եւ այլոց հետ լոյս է ընծայել Մատենադարանի Մանրանկարչական Գանձերը մեծադիր ալբոնը ֆրանսերէն։ Հայ մանրանկարչութեանը նուիրուած գեկուցումներով հանդէս է եկել մի շարք հանրապետական, հանախորհրդային եւ միջազգային գիտաժողովներում։

Կեանքի վերջին շրջանում, 2008ին Երեւանում լոյս տեսաւ Կորիսմազեանի Արիմի Սուրբ Խաչ Մենաստանին նուիրուած ոուսերէն աշխատութիւնը (Երինա Բարայեանի համահետինակութեամբ), իսկ Սիմֆերոպոլում (Արիմ) նոյն բուականին լոյս տեսաւ Արիմի Հայկական Մանրանկարչութիւնը (հայերէն եւ անգլերէն) մենազրութիւնը։ Նա Օլեգ Գարրիելեանի եւ Կոնստանտին Էռլիխի կազմած Արիմ. Հայեր. Արարման Տարը Ժողովածուի (Սիմֆերոպոլ 2008 հայերէն, ոուսերէն, ուկրաիներէն եւ անգերէն) գլխաւոր խորհրդատուններից էր։ Վերջին երկու գորերի համար Կորիսմազեանը Արիմում արժանացել է Այվազովսկի Եղբայրների նրգանակին։

Կորիսմազեանը մինչեւ կեանքի վերջին օրերն աշխատել է անմնացորդ նուիրումով՝ բազմարի ծրագրեր բողնելով անաւարտ։ 2009ին, «Նայիրի» Հրատարակչատնից, յետմահու լոյս տեսաւ Հայու եւ Հեմուտ Բուշհաուգէնների եւ Կորիսմազեանի *Armenische Buchmalerei und Baukunst der Krim/Armianskaya Knjignaya Jivopis I Arkhitektura Krima* (Հայկական մանրանկարչութիւնն ու ճարտարապետութիւնը Արիմում) գերմաներէն եւ ոուսերէն երկեզու հասորը որը նուիրուած է Մատենադարանի յինամեակին։

Եմա Կորիսմազեանը մահացաւ 2009 Յունիար 13ին, Երեւանում։

ԼԻԼԻԹ ԽԱՆԱՂԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ  
(1930-2009)



Լիբանանահայ գրականագետ, գրաքննադատ և մանկավարժ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկուստիքան (ՄՏԿԿ) Մեսրոպ Մաշտոցի շրանշանակիր դոկտոր Գրիգոր Շահինեան ծնած է Պէյրուր, 1930ին: Ընտանիքին հետ փոխադրություն Դամակոս, կը յաճախէ տեղույն Ազգային Սահակեան Վարժարանը, ապա՝ Մարիսը Ֆրէքներու դպրոցը: Վերադառնալով Լիբանան, երկրորդական ուսումը կը շարունակէ Համազգայինի Նշան Փարանձեան Շեմարանը, զոր կ'աւարտէ 1949ին եւ անմիջապէս ուսուցչութեան կը պաշտօնակոչուի նոյն հաստատութեան մէջ: 1952-56 կը յաճախէ Պրիստլի Ազատ Համալսարանը (Vrije Universiteit Brussel), ուր կը մասնագիտանայ մանկավարժութեան եւ գրականութեան մէջ: Պէյրուր վերադառնալով, 1956-1987 կը շարունակէ իր պաշտօնավարութիւնը Շեմարանին մէջ, դասաւանդելով հայ գրականութիւն, ֆրանսերէն լեզու եւ ֆրանսական գրականութիւն: 1966-70 Պէյրուրի մէջ կը հրատարակէ Ահեկան գրական-ծագութային եռամսեան: Ահեկան կը դառնայ ոչ միայն Շահինեանի գրականագիտական ուսումնասիրութիւններուն եւ գրաքննադատական հայեացքներուն ամրիոնը, այլեւ կը հանդիսանայ սփիտորահայ, յատկապէս երիտասարդ գրողներու ստեղծագործական փորձերուն եւ գրականութեան, արուեստի ու ազգային հարցերու նասին արտայայտություն ազատ բեմը: 1970-94 Շահինեան կը պաշտօնավարէ Լիբանանեան Համալսարանին մէջ իրեւ ֆրանսական գրականութեան դասախոս: 1999-2007 ՄՏԿԿ Զարթեան Դպրոցութիւններէն ներս կը դասաւանդէ հայերէն, մատենագրութիւն եւ մանկավարժութիւն, իսկ Քահանայից Պատրաստութեան Դասընթացներու ժիրէն ներս հայերէն:

1979ին Սորբոննի Համալսարանէն (Université Paris Sorbonne-Paris IV) Շահինեան կը ստանայ դոկտորի կոչում, պաշտպանելով Շահան Շահնուրի ստեղծագործութիւններուն վերաբերող իր աւարտածառը “Drame et Poésie d’Exile”:

1987ին կը նշանակուի Վարիչ ՄՏԿԿի Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կենտրոնին (ԽԳՄԿԿ), զոր կը վարէ մինչև 2007, նպաստելով լիբանանահայ դպրոցը վկայեալ մանկավարժներով օժտելու կենսական պահանջման:

1994ին Երեւանի Պետական Համալսարանին մէջ ներկայացնելով «Շահան Շահնուրի Ստեղծագործութիւնը» գիտական ատենախօսութիւնը, Շահինեան կը ստանայ Բանասիրական Գիտութիւններու Դոկտորի աստիճան:

1998-2003 Շահինեան վարած է ՄՏԿԿի արխիւստան պատասխանատուութիւնը: Այստեղ կատարած իր ուսումնասիրութիւններէն հաւաքուած են բազմահաստրանի նիւթեր, որոնցմէ հրատարակուած են Արտորի Օրագիր - Շատարջ Նարդունի (ՄՏԿԿ, 2000) եւ Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Յ Կարողիկոսներու Եւ Ամենայն Հայոց Կարողիկոս Խորեն Ա. Սուրառեզնանցի (ՄՏԿԿ, 2002) հատորները:

Մեծ է Շահինեանի գրականագիտական և գրաբնահատական վաստակը: 1961ին Մշակ Հրատարակչատունն լոյս կը տեսնէ անոր առաջին մենագրութիւնը՝ Համաստեղ: Երիտասարդ գրականագիտին այս գործը կը համարուի Համաստեղի գրականութեան համապարփակ ու խորարափանց ուսումնասիրութեան առաջին ժաւալուն փորձը: 1962ին, նոյն հրատարակչատունն լոյս կը տեսնէ իր Հատրնտիր՝ գրադատական յօդուածներու ժողովածուն, նոյնուած սփիդրահայ և հայրենի գրողներու գործերուն: Ասոր կը յաջորդեն Գոյրգէն Մահարի Վարտունի Հանգրուանին մենագրութիւնը (Մշակ, 1964), Հանդիպումներ՝ նորագոյն գրադատական յօդուածները ամփոփող հատորը (Շիրակ, 1966), Զիներմ Ի Վեր Լեռն Շանքին նոյնուած մենագրութիւնը (Համազգային, 1967):

Շահինեանը յիրավի կարելի է համարել Շահնորի գրականութեան լաւագոյն գիտակներէն մին: Շահնորի գրականութեան բոլոր ծավերը ուսումնասիրելու ու անոր վաստակը լոյսին հանելով գրողին արժանին մասուցանելու Շահինեանի նաևնագիտական մօտեցումին արդիւնքը կ'ըլլան ոչ միայն զոյց աւարտածառերը, այլև Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան տպարանէն լոյս տեսած *Drame et Poésie de l'Exile dans l'Oeuvre d'Armen Lubin en Particulier et d'Ecrivains Arméniens de France en Général* (1979), Կենսագրութիւն Եւ Մատենագիտութիւն Շահան Շահնորի (1981) և Շահան Շահնոր, Արտուր Եւ Արտեստ (1985), հատորները, իսկ *Parages d'Exile: Nouvelles, des Chahan Chahnoour* ֆրանսերէն հատորը (1984, Քոնեար, Le Temps qu'il Fait) կ'ամփոփէ Շահինեանի կատարած Շահնորի երեք պատմուածքներու ֆրանսերէն բարզմանութիւնը: Շահինեանի նոյնուած Շահնորի գրականութեան դրսեւորուած է նաև իրովի ան Շահնորէն երեք պատմուածքներ՝ «Պճեղ Մը Անոյշ Սիրտ», «Առաօտեան Ծեփոր» և «Հոսանքի Եզրը» կը վերածէ բատրերգութեանց, հաւատալով որ թեմադրութելով անոնք աւելիով հասանելի կը դառնան հայ հասարակութեան (Թատերական Պատկերներ, Շիրակ, 1986): Մամուլի տակ է Շահնորի կեանքին ու գրական ստեղծագործութիւններուն նոյնուած եռահատորը, որ ծրագրուած է հրապարակել 2010ի աշնան երեսանի մեջ, *Ազգ օրաթերքի հրատարակութեամբ*:

Շահինեանի խմբագրութեամբ ԱՏԿԿէն լոյս տեսած են Գրիգոր Զօհրապի (1988) և Մատթէոս Մանութեանի (1990) Երկեր հատորները, Վահրամ Մավեանի Ամրողական Երկերը (Ա. Իրտ.՝ 1993, թ. Հրտ.՝ 1996, Եզմիածին) և Սիլվա Կապտսիկեանի Գիրս Մելայ Յիշատակող հատորը (1996): Շահինեան գործակցած է նաև ԱՏԿԿի Դանիէլ Վարուժան Գրական Հիմնադրամի կազմին հետ և լոյս ընծայած 17 հատոր՝ արեւմտահայ դասական գրողներու գործերէն:

Հայ գրականութիւնը ֆրանսախօս ընթերցողին հասու դարձնելու նախանձախնդրութեամբ, ԱՏԿԿը լոյսին կ'ընծայէ Շահինեանի *Panorama de la Litterature Armenienne* (Անթիխա, 1980) և *Oeuvres Vives de la Litterature Armenienne* (Անթիխա, 1988) հատորները: 1993ին, Փարիզի CNRSի հրատարակութեամբ լոյս կը տեսնէ Քոն Մուրաֆեանի *Le Royaume Armenien de Cilicie* հատորը, գործակցութեամբ Գրիգոր Շահինեանի: Հայերէնի և ֆրանսերէնի իր բացատեղեակորթիւնը զինք կը մղէ պատրաստելու հայերէն-ֆրանսերէն գործնական բառարան մը, որ 1997ին լոյս կը տեսնէ Պէյրութի Շիրակ Հրատարակչատունն: Յարութիւն Քիորքնեանի և Շահինեանի գործակցութիւնը կազմակերպվել է 2000 թվականին:

թեամբ, նոյն տպարանէն լոյս կը տեսնէ Ֆրանսերէն-Հայերէն Գործնական Բառարանը (1998) և Ֆրանսերէն-Հայերէն-Ֆրանսերէն Միացեալ Բառարանը (2000), որուն համակարգչային տարրերակը՝ *E-lexique Machtois* ամբողջացած տեսքով կը թողարկուի 2008ին, Փարիզ:

Ծահինեան զանազանութիւն շդրաւ մանկավարժութեան ու գրականագիտութեան միջև: Անոր մանկավարժական գործունեութիւնը չսահմանափակութեալ է և գույքի դասարաններուն մէջ: Ծահինեան ԱՏԿԿի տպարանէն լոյս կ'ընծայէ Հայերէնի Եւ Հայ Գրականութեան Դասաւանդման Կերպ (1995), Հայոց Պատմութեան Դասաւանդման Կերպ (2002) և Հայերէնի Բարեյաւումի Ձեռնարկ (2006) մանկավարժական ուղեցոյցները, որոնք կը խօսին Ծահինեան մասնագիտ մանկավարժին լայն մտահորիզոնին ու արդիական մտածողութեան մասին: Մանկավարժական արդի ուղղութիւններն ու ծգութմները ազգային մանկավարժութեան աւանդներուն ազուցելու եւ սփիտքահայ դպրոցին մէջ հայագիտական նիրերու դասաւանդման առարկայական ու ենթակայական խոշոնդունները վերացնելու Ծահինեանի տեսական թէ գործնական մուտքումները պէտք է անպայմանօրէն ուսումնասիրուին, ինչպէս նաև պէտք է հրատարակուի անոր անտիպ մնացած Մանկավարժական Խոհերը:

Մեծ ուշադրութիւն դարձնելով պատանիներու ընթերցանութեան կարեւութութեան ու պատանեկան գրականութեան անհրաժեշտութեան, Ծահինեան կը սկսնաւորէ Խոչեր Գալուստեան Մանկապատանեկան Մատենաշարը, որմէ ցարդ հրատարակուած են 22 հատորներ՝ մեծամասնութիւնը լոյս տեսած իր լեզուա-ոճական պատշաճեցումներով: Մասնայ Ծոեր դիցազնավէլայի գրոյցները, պատանեկան տարիքի յարմար արեւմտահայ եւ արեւելահայ գրողներու գործերը ենթարկուելով մանկավարժ գրականագիտին բժախնդիր հպումներուն դարձած են մատչելի սփիտքահայ դպրոցականին: Աւելին, Ծահինեան կը հեղինակէ նաև երկու պատանեկան պատմուածքներ՝ *Պիժու* (Անրիիաս, 2003) և Հայրիկին Ու Տուտունին Ամառնային Արկածները (Անրիիաս, 1999): Անտիպ կը մնան Արեգ մանկապատանեկան գործը, եւ Ծովասար նախակրթարանի Ա.-Ե. դասարաններու հայերէնի դասագիրքերու շարքը:

Ան ֆրանսերէնէ բարգմանած է նաև Ժանին Ալբունեանի *Բաց Միայն Իմ Դիմաց Ծամրաններն Արմենիոյ* (Անրիիաս, 2001), Արամ Զաարարիի եւ Սոնիրա Խոմիրի *Portraits du Caire: Van Leo, Armand, Alban* (Actes du Sud, 1999), Ալեքսանտր Նաժճարի *Պատերազմի Դպրոց* (Ծիրակ, 2001), Դար Մը Պատմութիւն ՀՔԸԸ (գործակցութեամբ Ծաղիկ Արծրունիի, Փարիզ, 2001) եւ Շիովանի Կուայբայի գրոյցները Գարեզին Ա. Ամենայն Հայոց հայրապետին հետ՝ Հանդիպում Մը Երկրի Եւ Երկինքի Միջեւ (Քանատա, 2008) հատորները:

2004ին, Ծիրակ Հրատարակչատուննեն լոյս տեսաւ անոր վերջին՝ *Վերաբաղ յուշագրական հատորը*, ուր ի յայտ կու գայ Ծահինեան մարդուն, հայուն, հայ գրականութեան ու դպրութեան նույիրեալին պայծառ ու մտերմիկ երեսը:

Ծահինեան համեստագոյն անձնաւորութիւն մըն էր: Երեցին ու երիտասարդին, լիբանանահայ տարրեր հոսանքներու մտաւորականներու, արուեստագիտներու ու գրողներու հետ սերտ կապեր պահպանող, միշտ համդարտ, բարեհամբոյր բայց միաժամանակ յախուտն կեցուածք ունեցող բազմակողմանի զարգացումի տէր մտաւորականն էր ան, որ լիբանանահայ մամուլի

Եցերէն չէ գարանած յայտնելու իր կարծիքը, երբեմն նոյնիսկ ի հեճուկս իշխող մտայնութեանց: Եւ ան այս իրաւունքը վաստակած էր ջանադիր աշխատանքին ու սկզբունքային կեցուածքին շնորհի: Սփիորահայ բազմաթիւն ու երբեմն խորապէս պառակտուած կառոյցին մէջ Ծահինեան եղաւ այն քիչերէն, որոնք գրական աշխատանքն ու սեփական գաղափարախօսական համոգումները չնոյնացուցին, այլ արժանաւորին արժանին նատուցանելով վայելեցին համազգային յարգանք:

Դոկտոր Գրիգոր Ծահինեան իր մահկանացուն կնքեց 15 Փետրուար 2009ին, Պէյրոր:

ԱՐՄԵՆ ԻՒՐԱՆԵԼԵԱՆ  
urneshlian@yahoo.com



## ԱՐՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ (1941-2009)

ճարտարապետ, հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հասարակական կազմակերպութեան հիմնադիր-նախազահ, ճարտարապետութեան դոկտոր Արմեն Հախնազարեանը ծնուել է 1941 Մայիս 5ին, Թեհրանում, ազուլնցի Յովհաննէս Հախնազարեանի ընտանիքում: Հայրը 1922-1932 ուսանել է Պրահայում, պատմագիտութեան և փիլիսոփայութեան դոկտորի կոչում ստացել Պրահայի Համալսարանում, այնուհետեւ երկար տարիներ եղել է հայկական դպրոցի տնօրէն Թեհրանում: Որդին յետմահու հրատարակել է հօր Գոյրան Գաւառ աշխատութիւնը (Թեհրան, 1991):

Հախնազարեանը տարրական եւ միջնակարգ կրթութիւնն ստացել է Քուշէ Դաւթեան դպրոցում, որն աւարտել է 1959ին: Գերմանիայի Աախեն քաղաքի համալսարանում (T. H. Aachen) ուսանել է ճարտարապետութիւն և քաղաքաշինութիւն:

1968ին շուրջ 6 ամիս գրադուել է Պարսկաստանի Ասորպատական նահանգի (պատմական Արտազ գաւառ) տարրեր շրջաններում Պարսպատութիւնում (Ղարաղաղ), Ռումիայում, Սալմասում, Խոյում, Արդարիում և Թաւրիզում գտնուող հայկական վանքերի ու եկեղեցիների, մասնաւորապէս Ս. Թաղէս Առաքեալի, Շործորի Ս. Աստուածածին և Ղարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ վանքերի ուսումնասիրութեամբ, լուսանկարմամբ եւ չափագրութեամբ: Նման աշխատանքներ է կատարել նաև Նոր Ջուղայում պահպանուած 13 եկեղեցիներում, Փերիայի և Չարմահալի երեմնի հայաբնակ գիտերում: Ս. Թաղէս Առաքեալի Վանքի ուսումնասիրութիւնը իհմը է ծառայել ճարտարապետութեան դոկտորական թեզի համար: Սուրբ Թաղէ Վանքը մենագրութիւնը հրատարակուել է Միլանի «Հայ ճարտարապետութեան Վաւերագրեր» մատենաշարով, անգլերէն և հայերէն: Նոյն մատենաշարով է հրատարակուել նաև նրա յաջորդ՝ Նոր Ջուղա աշխատութիւնը (1992, հայերէն և անգլերէն, նոյնը հրատարակուել է նաև պարսկերէն):

1972-1978 Գերմանիայից կազմակերպել է գիտարշաւներ Արևմտեան Հայաստան և Կիլիկիա, որոնց արդինքը հիմք է ծառայել Հայկական ճարտարապետության 7 հատորանոց մանրաժապատէնների հրատարակութեանը փրոք. Վազգէն Բարսեղեանի (ԱՄՆ) մեկնասուրբեամբ:

Ծարտնակական աշխատանքը, որի նպատակն էր գիտարշաւների միջոցով պատմական Հայաստանի տարածքում (ներառեալ Փոքր Հայքն ու Կիլիկիան, նաև Սփիտիքը) գտնել, ուսումնասիրել և հանրութեանը ներկայացնել հայկական պատմամշակութային արժեքները, իիմնարար է դարձել 1978ին «Հայկական ճարտարապետութեան Ռեսումնասիրութիւն» (Research on Armenian Architecture) հասարակական կազմակերպութեան ստեղծման համար: 1998ին Կազմակերպութիւնը պաշտօնականացել է Երեւանում: Այն ունի մասնաճիւղեր Ամսէնում, Լու Անջելըսում և գործակիցներ՝ տարբեր երկրներում:

1982-1985 Հայսնազարեանը դեկավարել է Թեհրանի Ս. Գերգ, Ս. Գրիգոր և Վանքի եկեղեցիների վերականգնման աշխատանքները: 1996-1997 մասնակցել է Սիրիայի Քեսար քաղաքի երկու եկեղեցիների և բնակելի երկու շենքերի վերականգնմանը: Գերմանիայի Քեօն քաղաքում հայոց առաջնորդարանին տրուած գերմանական բողոքական եկեղեցին վերակառուցել է Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգի համեմատ: Հայսնազարեանը Հայաստանում մասնակցել է մի քանի վանքերի և եկեղեցիների՝ Տարեւ գիտի Ս. Սինա Եկեղեցու, Ապարանի Ս. Խոաչ Եկեղեցու, Սաղմոսավանքի, Ուշի գիտի Ս. Սարգսի Վանքում դամբարան-մատուտի, Արցախի Քարինտակ գիտի Եկեղեցու և նշանաւոր Դաղիվանքի վերականգնման աշխատանքներին և դեկավարել դրանք: Ըուրջ 25 տարի եղել է «Երևի Եւ Մշակոյր» հասարակական կազմակերպութեան վարչութեան կազմում:

Հայսնազարեանը հեղինակ է ճարտարապետութեան վերաբերեալ մի շարք յօդուածների, մասնակցել է քազմաքի գիտաժողովների և մի շարք երկրներում գեկոյցներով ու ցուցահանդեսներով ներկայացրել հայկական ճարտարապետութիւնը:

Հայսնազարեանի մշտական գործակիցը եղել է կինը՝ ազգութեամբ գերմանուի ճարտարապետ Մարգրերը:

Արմեն Հայսնազարեանը մահացաւ 2009 Փետրուար 19ին, Ամսէնում, աճինի մի մասն ամփոփուած է Արտաշաւանում:

ՀՀՀ

## ԿԱՐԵՆ ԻՒԶԲԱՇԵԱՆ (1927-2009)

Հայագէտ-քիւզանդագէտ, միջնադարեան հայ պատմագրութեան երկերի քարզմանիչ, պատմական գիտութիւնների դոկտոր Կարեն Սկրտչի Բագրաշեանը ծննդել է 1927 Յունուար 6ին, Երեւանում, շուշեցու ընտանիքում: Ուսանել է Երեւանի Պետական Համալսարանի Պատոմութեան Բաժնում: 1947ին ուսումը շարունակել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Համալսարանում՝ դառնալով ականաւոր հայագէտ Յովսէփ Օքբելու վերջին աշակերտը: 1955-1958 Բագրաշեանն աշխատել է Մեսրոպ Մաշտոցի Անուան Հիմ-

Շնոագրերի Ինստիտուտ-Մատենադարանում, 1958ից ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտութեան Ինստիտուտի Լենինգրադի Բաժանմունքում: Նեկավարել է Ինստիտուտի Յնվելի Օրբելու հիմնադրամ «Կովկասի Կարինետ»ը:

Իզրաշեանը գրաղուել է հայոց պատմութեան և մատենագրութեան, հայկական ծեռագրերի, հայ-թիւգանդական յարաբերութիւնների ուսումնասիրութեամբ: Հրատարակել է մի քանի տասնեակ մենագրութիւններ, յօդուածներ, գրախօսականներ: Նրա աշխատասիրութեամբ լոյս է տեսել հայ միջնադարեան պատմագրութեան կարեւոր երկերից մեկը՝ *Պատմութիւն Արիստակէսի Լաստիերոցոյ* գրական յուշարձանը (Երեւան, 1963): Առանձին գրերով ուսւերեն լոյս են տեսել Իզրաշեանի՝ Բիւզանդիայում 1180-1204 թթ. դասակարգային պայքարին և Խաչակրաց շորորդ արշաւանքին (Երեւան, 1957), Բագրատունիների դարաշրջանի հայկական պետականութիւններին և Ռ.-Ժ. Դարերի Բիւզանդիային (Մոսկով, 1988) նոյնուած աշխատութիւնները, *Ակադեմիկոս Յնվելի Արգարի Օրբելի (1887-1961)* (Մոսկով, 1964, ուսւերեն, նոյնը հայերէն՝ Երեւան, 1971), եւ *Դարի Հայկական Էպուլէան. Աւարայրի Շակատամարտից Դէպի Նուարսակի Պայմանադրութիւնը* (Երեւան, 1989, նոյնը ուսւերեն՝ Մոսկով, 2001, հայերէն երկրորդ հրատարակութիւնը՝ Երեւան, 2005), Հայաստանի պատմութեան և մշակոյթին նոյնուած հնագոյն ժամանակներից մինչեւ Երրորդ Հանրապետութիւն ուսւերեն աշխատութիւնը (հեղինակակից՝ Գագիկ Սարգսեան և ուրիշներ, Երեւան, 1998), *Ուկեղարի Վերջին Աստղը՝ Նազար Փարագեցի* (Էջմիածին, 1999), *Հայագիտութեան Ներածութիւն* (Սանկտ-Պետերբուրգ, 2003, ուսւերեն, նոյնը հայերէն՝ Երեւան, 2006):

Կարեն Իզրաշեանը մահացաւ 2009 Մարտ 5ին, Սանկտ-Պետերբուրգում. բաղուած է տեղի Սուրբ Յարութիւն եկեղեցու բակում:

ՀՀՀ

### ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹԵԱՆ (1932-2009)

Արտեստարան, ՀՀ արտեստի վաստակաւոր գործիչ, հայ կերպարութեատի եռանդուն քարոզիչ եւ կազմակերպիչ, հասարակական գործիչ Հենրիկ Սուրենի Իգիրեանը ծննդել է 1932 Մարտ 5ին, Թրիլիսիում: 1949ին աւարտել է Երեւանի Կիրովի անուան թիւ 12 միջնակարգ դպրոցը: 1956ին աւարտել է Երեւանի Ժդանովի Անուան Ռուսաց Եւ Օտար Լեզուների Պետական Ինստիտուտի Ռուսաց Լեզուի Եւ Գրականութեան Բաժինը: 1963ին աւարտել է Լենինգրադի Ռեպինի Անուան Գեղարվեստի Ակադեմիայի Արտեստի Տեսութեան Եւ Պատմութեան Բաժինը: 1960-76 աշխատել է Հայաստանի Պետական Պատկերասրահում որպես Հայ Կերպարութեատի Բաժնի Վարիչ: 1968ից եղել է ԽՍՀՄ և Հայաստանի նկարիչների միութիւնների անդամ:

1970 Մարտ 13ին հիմնադրել է աշխարհում առաջին մանկական ստեղծագործութեան բանգարանը: 1972ին նախաձեռնել եւ հիմնադրման օրուանից դեկավարել է Հայաստանի Ժամանակակից Արտեստի Թանգարանը՝ առաջինը ոչ միայն ԽՍՀՄում, այլև ողջ սոցիալիստական երկրներում:

Իգիրեանը 1978ին հիմնել է Գեղագիտութեան Ազգային Կենտրոնը, որի կազմում Մանկական Ստեղծագործութեան Թանգարանից բացի գործում են կերպարութեատի և դեկորատիվ-կերպարական արուեստի ստուդիաները, փոքր թատրոնը, մանկական ֆիլիարմոնիան: Կենտրոնը ունի մասնաճիւղեր Հայաստանի տարբեր մարզերում:

1980ին Իգիրեանին շնորհուել է Հայաստանի արուեստի վաստակաւոր գործի կոչում: 1989-91՝ ակտիվ հասարակական գործունեութիւն է ծավալել ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդում որպէս ժողովրդական պատգամատոր, ապա՝ Գերագոյն Խորհրդի անդամ: Պարզեւատրուել է շքանշաններով և մեդալներով («Ժողովրդների Բարեկամութեան» շքանշան, «Մովսէս Խորենացի» մեդալ, ԼՂՀ «Մխիթար Գօշ» մեդալ, Կալիֆորնիայի Լոս-Անջելեսի Համալսարանի Հայագիտութեան Ամբիոնի «Գրիգոր Նարեկացի» ոսկե մեդալ, Ֆրանսիայի Համբապետութեան Մշակոյթի Նախարարութեան Արուեստի և Գրականութեան շքանշան): 2004ին ընտրուել է Երեւանի պատուաւոր քաղաքացի: 2007ին արժանացել է ՀՀ նախագահի արուեստի բնագաւառում նախատեսուած մրցանակին՝ «Ի. դարի Հայ արուեստի ուսումնասիրութեան եւ տարածման գործում ունեցած նշանակալի ներդրման համար»: 2009ին Ֆրանսիայում Հայաստանի տարուայ կապակցութեանը նոյնպէս արժանացել է մեդալի:

1980ին հրաիրուել է Մոսկուա որպէս Ռուսական խաղերի ժամանակ բացուած «Ես Տեսնու Եմ Աշխարհը» մանկական միջազգային ցուցահանդէսի տնօրէն: 1987ին ԱՄՆում Իգիրեանը ներկայացրել է Հայաստանի մանկական արուեստը և 9 ամիս շարունակ դասախոսութիւններ է կարդացել ԱՄՆի տարբեր քաղաքներում: 1989ին Իգիրեանը և «Մոսկուայի Վիրտուոզներ» նուազախմբի հիմնադիր և նուազավար Վաղիմիկ Սպիրակովը մանկական արուեստի ցուցահանդէս են բացել Ֆրանսիայի Կալմար քաղաքում: 1990ին նոյն ցուցահանդէսը բացուել է Դատուում միջազգային տնտեսական ֆորումի ժամանակ: Իգիրեանը բազմաթի միջազգային ցուցահանդէսներ է կազմակերպել և դեկավարել աշխարհի տարբեր երկրներում, 1991ին Գերմանիայի Բուխում քաղաքում, 1998ին Բուենոս Այրեսում, 1999-2000ին Համաշխարհային Բանկում (Ուաշինգտոն), 2000ին Երևանու Այրեսում, 2001-2002ին Նիւ Եռրում, Չիքագոյում, Միլուոքիում (ԱՄՆ), 2003ին Երումիութիւնում (Քրիստլ):

Հենրիկ Իգիրեանը հեղինակ է բազմաթի մենագրութիւնների, կատալոգների, ալբոնների, այդ թուում Մարտիրոս Մարեան (Երեւան, 1965), Յակոբ Գիլրիցեան (Երեւան, 1966), Գէորգ Գրիգորեան - Զոտոս (Երեւան, 1967), Յովսէփ Կարալեան (Երեւան, 1967), Յովհաննէս Այվազովսկի (Երեւան, 1967), Արտօ Զարմաքեան (Երեւան, 1971), Երուանդ Քոչար (Երեւան, 1972), Սեղրակ Սոռարելեան (Երեւան, 1975), Յակոբ Ամանիկեան (Երեւան, 1978), Վաղարշակ Էլիբեկեան (Թրիլիսի, 1979), Նիկոլայոս Նիկոլոսեան (Երեւան, 1979), Ռուդոլֆ Խաչատրեան (Երեւան, 1980), Երուանդ Քոչար (Երեւան, 1980), Մինաս Աւետիսեան (Երեւան, 1984), Յակոբ Յակոբեան (Երեւան, 1989), Հրաշքերի Աշխարհ (մանկական թանգարան) (Wonderland, 1997), Ֆուջիյամայից Արարատ (միջազգային մանկական արուեստ) (Երեւան, 1997), Թանգարան (Երեւան, 1998), «Աշխարհի Լաւագույն Գրքերը» ցուցահանդէսում ստացել է UNESCOի մրցանակը որպէս տարուայ լաւագոյն գիրք, 1998), Gabo (Գարբիել Մանուկեան) (Երեւան, 1998), Արմեն Գէորգեան (Երեւ-

ան, 1999), *Albert* (Ալբերտ Յակոբեան) (Երևան, 1999), *Արամ Խաչիկեան* (Երևան, 1999), *Հայկական Հերիարքություն* (ծրագրի եւ առաջարանի հեղինակ, Երևան, 1999, հայերէն եւ անգլերէն), *Յովհաննես Թումանեանի Հերիարքություն* (ծրագրի եւ առաջարանի հեղինակ, Երևան, 1999, հայերէն, անգլերէն եւ ռուսերէն), *Մարգիս Համայքաշեան* (Երևան, 2000 եւ 2006), *Երուանդ Քոչար* (Երևան, 2000), *Յովհաննեսից Մինաս* (Երևան, 2001), *Մարինէ Դիլանեան* (Երևան, 2002), *Թեմի Վարդանեան* (Երևան, 2002), *Էմիլ Կազազ* (ծրագրի հեղինակ, Երևան, 2004), *Հայկական Ներկապնակ* (ծրագրի հեղինակ, ալրու 2 մասից, Երևան, 2005), *Զաջուռեցի Մինասը* (Երևան, 2006), *Վրոյր* (Երևան, 2006), *Աշոտ Յովհաննեսիսեան* (Երևան, 2007), *Գագիկ Ղազանչեան* (Երևան, 2008):

Իգիրեանից մի շարք աշխատութիւններ իրատարկուել են տարբեր լեզուներով, ինչպէս «Մինաս Աւետիսեան» (մենագրութիւն, Սոսկուա 1970, Լենինգրադ 1975), «Լալինիս Բաժրելուկ-Սելիրեան» (Սոսկուա, 1980, 1982), «Ուուդլի Խաչատրեան» (Սոսկուա, 1984), «Վաղարշակ Էլիրելեան» (Սոսկուա, 1991), չեխերէն «Մ. Ս. Սարեան» (Պրահա, 1966), «Մինաս Աւետիսեան» (մենագրութիւն, Պրահա, 1984), հունգարերէն «Սարեան» (Բուդապեշտ, 1967), գերմաներէն *Armenische Malerei* (Հայկական նկարչութիւն, Լայպցիգ, 1975), «Մինաս Աւետիսեան» (Բեռլին, 1975), պովակերէն *Armenska Paleta* (Հայկական ներկապնակ, Բրատիսլավա, 1976), պորտուգալերէն *Pintura Armenia Contemporânea* (Լիսաբոն, 1978), լիենէն *Malarstwo Armenii* (Հայաստանի նկարչութիւնը, Վարշավա, 1987), անգլերէն *Tree of Life* (Բէյրութ, 1995), *Noah's Arc* (Բէյրութ, 1995), *Modern Art Gallery* (Երևան, 1997), ֆրանսերէն *Art Contemporain d'Arménie* (կատալոգ, Փարիզ, 2007), իտալերէն *I Colori dell'Armenia* (Հայաստանի գոյները, Հռոմ):

Հենրիկ Իգիրեանը բազմաշնորհ անհատականութիւն էր, աչի էր ընկնում գիտելիքների հսկայածաւալ պաշարով, բաղաքացիական խիզախութեամբ, աներեւակայնի աշխատասիրութեամբ: Այդ ամենը արտացոլում էր նրա արուեստարանական, կազմակերպչական եւ հասարակական-քաղաքական բնույն գործունեութեան մէջ: Մեծ է Իգիրեանի վաստակն ազգային կերպարութափի գարգացման ու տարածման, երեխաների գեղագիտական կրթութեան, հասարակական գործունեութեան ասպարեզներում: Իգիրեանի կերպարը լաւագոյն է տրուած Եակով Զարգարեանի *Այդ Իգիրեանը գրքում* (2001, Երևան, ռուսերէն, 2008, Երևան, հայերէն):

Հենրիկ Իգիրեանը մահացաւ 2009 Մայիս 11ին, Երևանում:

ՀՀՀ

